*ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ*

կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ ԳԱԱ Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտ ՊՈԱԿ-ը , ստորև ներկայացնում է իր կարիքների համար « Հատուկ օպտիկական գործիքներ » ձեռքբերման նպատակով կազմակերպված « *ՌՖԷԻ-ԳՀԱՊՁԲ -20/7* » ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 12.10.2020թ.-ին կնքված « *ՌՖԷԻ-ԳՀԱՊՁԲ -20/7* » պայմանագրում 23.10.2020թ կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության պատճառ: 1 ապրանքի մատակարարման և վճարման ժամկետների փոփոխության անհարժեշտություն :

Փոփոխության նկարագրություն: 1 Կողմերի միջև կնքված համաձայնագրի համաձայն՝ մինչև պայմանագրով ի սկզբանե սահմանված ժամկետը լրանալը պայմանագրով ապրանքի վճարամն և մատակարարման համար սահմանված ժամկետը մեկ անգամ՝ մինչև երեսուն օրացուցային օր ժամկետով երկարաձգում:

Փոփոխության հիմնավորում: 1 « *ՌՖԷԻ-ԳՀԱՊՁԲ -20/7*» ծածկագրով պայմանագրի 8,5 կետ, ինչպես նաև ՀՀ Կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման 56 -րդ հոդվածի 4 կետ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Վեներա Բալասանյան:

*Հեռախոս* 010-58-33-82, 055 810487

*Հեռախոս* 0232 3-27-89

*Էլ. փոստ* office@irphe.am

*Պատվիրատու* *ՀՀ ԳԱԱ Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտ ՊՈԱԿ*

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

12. 10.2020թ. կնքված « *ՌՖԷԻ-ԳՀԱՊՁԲ -20/7* » գնման պայմանգրի

Ք Աշտարակ 23.10.2020թ.

<u>ՀՀ ԳԱԱ Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտ ՊՈԱԿ</u>-ը ի դեմս տնօրեն Տ. Զաքարյանի, որը գործում է ինստիտուտի_կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և Արագած ՍՊԸ-ը, ի դեմս տնօրեն Հ. Ղարիբյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին , այսուհետ կողմերը հիմք ընդունելով 12.10.2020թ. –ին կնքված « *ՌՖԷԻ-ԳՀԱՊՁԲ -20/7* » ծածագրով գնման պայմանագիրի / այսուհետև՝ Պայմանագիր / 8.5 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը / այսուհետև Համաձայնագիր/ հետևյալի մասին:

1. ***Համձայնագրի առարկան, գինը , վճարման կարգը և ժամանակացույցը***

1.1. Սույն Համաձայնագրով Կողմերը համաձայնության եկան և հաստատեցին 12.10.2020թ. կնքված «*ՌՖԷԻ-ԳՀԱՊՁԲ -20/7*» ծածագրով գնման պայմանագով ամրագրված վճարման և մատակարարման ժամկետները փոփոխել.

Կողմերը հետագա համագործակցության նպատակով որոշեցին

ա) պայմանգրով նախատեսված հավելված 1-ով սահմանված գնման ժամանակացույցը երկարացնել մինչև 2020թ նոյեմբերի 15-ը :

բ) պայմանգրով նախատեսված հավելված 2-ով սահմանված վճարման ժամանակացույցը երկարացնել մինչև նոյեմբեր 2020թ.

**2. Այլպայմաններ**

2.1 Սույն Համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրով չնշված՝ գնման պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Կողմերի պատասխանատվության հետ կապված այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է մեկ էջից , կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ , յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ

**9. *Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները***

| **ԳՆՈՐԴ** | **ՎԱՃԱՌՈՂ** |
|---|---|
| ՀՀ ԳԱԱ Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտ ՊՈԱԿ,<br>ք. Աշտարակ , Ալիխանյան եղբայրներ թ.1<br>ՀՀ ՖՆ ԳՎ 900448000407<br>ՀՎՀՀ 05001265 | ԱՐԱԳԱԾ ՍՊԸ<br>Ք. Երևան, Ռուստամյան 53<br>Հ/Հ 220290121148000<br>Բանկ Ակբա Կրեդիտ Ագրիկոլ<br>ՀՎՀՀ 01202004 |
| ------------------ Տ. Զաքարյան<br>/ստորագրություն/<br>Կ.Տ | ------------------ Հ. Ղարիբյան<br>/ստորագրություն/<br>Կ.Տ |